„ՅԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ"



Նստած են՝ դաշնակցական Դրօ Կանայեանը եւ Կուռօ Թարխանեանը՝ դաշնակ գնդապետ, որը ղեկավարն է եղել Դրօյի շտաբին դաշնակ եւ ֆաշիստ հետախոյզների, եւ որոնք աշխատանք են կատարել Կարմիր Բանակի թիկունքում։

Կանգնած են ձախից—աջ, 2-րդը՝ Դրօի շտաբում Լէգէոնների պատրաստման պետ՝ դաշնակցական Բենօն, գերման զինւորականի հագուստով՝ Բաղդասարեան Տիգրան Բեկ, որը Դրօյի շտաբի կողմից նշանակւած է Նիկալաեւկա կայարանի խմբապետ, Հիւսիսային Կովկասում։

Իւրաքանչիւր հաւաքականութիւն, խմբակցութիւն, կուսակցութիւն, որ կազմւում է մի ժողովրդի կեանքի մէջ, անշուշտ բղխում է քիչ թէ շատ այդ ժողովրդի այս կամ այն պահանջից, հոլովոյթից, կարիքից, կացութիւնից։ Որքան ժամանակ, որ տեւում է վերջին պարագան, որքան որ հիմնաւորւում ու երկարաձգւում է նա, նոյնքան և տեւում, հիմնաւորւում և երկարաձգւում է այդ հաւաքականութիւնը, խմբակցութիւնը կամ կուսակցութիւնը։

Սակայն ժամանակավրիպում—անախրոնիզմ—է ստեղծւում երբ առանց հիմունքի, առանց կարիքի, հնամենի գոյութեան հետեւանքով շարունակւում է մի որեւէ նախկին կազմակերպութիւն, անհամապատասխան ժամանակի կարիքներին և ոգուն։

Ճիշտ ժամանակին յայտարարեց ականաւոր՝ յայտնի խոհուն հայ ազգասէր Քաջազնունին «Դաշնակցութիւնը անելիք չունի»։

Սակայն միանգամայն հակառակը հետապնդւեց և այդ իսկ պատճառաւ երկարատեւ տարիներ խաչաձեւեցին հայ ժողովրդի հիմնական շահերը՝ այդ կուսակցութեան տարած ուղեգծին։

Վարկաբեկիչ մի պայքար, անւանարկութիւն, վիրաւորանք, հակապրոպագանդ, վնասաբեր ու վտանգաւոր վերաբերմունք և ուղղութիւն թափ ու թռիչք առան Մայր Հայրենիքի, նրա ժողովրդի ու նրա պաշտպան Խորհրդային Միութեան հասցէին։

Մայր Հայրենիքից դուրս գտնւող և հոգով ու սրտով նրան ու նրա շահերին կապւած անձինք, պաշտօնապէս մատնւեցին իրենց բնակած երկրների ոստիկանութիւններին ու կառավարութիւններին՝ իբրև վտանգաւոր և վնասակար, դաւաճան, մատնիչ, ուրացող անձինք, հետապնդւեցին, հալածւեցին, բանտարկւեցին, անգամ հրապարակաւ ահաբեկումների ենթարկւեցին և այդ ուղեգիծը հետապնդող կուսակցութիւնն ու իր մամուլը ոչ միայն յոխորտացին և եւս առաւել բամբասանքներով ու սեւացրէքեան քաղաքականութեամբ հալածեցին Մայր Հայրենիքի հաւատացեալ ու անձնուէր բարեկամներին, այլ և դոյզն խղճմտանքը չունեցան հանդէպ այդ անմեղ դատապարտեալների, և ոչ իսկ իրենց «քարոզախօս, հեռատես, քաղաքագէտ, շրջահայեաց, փոթորկաճանաչ, դիւանագէտ» և այլ բարձր տւեալներով օժտւած գաղափարախօսները։

Այսօր ոչ քէն, ոչ ոխ, ոչ վրէժ և ոչինչ չեն հետապնդում Մայր Հայրենիքի ճշմարիտ բարեկամները։ Նրանք լիովին վարձատրւած են տեսնելով Մայր Հայրենիքի փառապանծ յաղթանակը, վերելքը և կատարեալ յաջողութիւնը։

Այսօր նրանք չեն ուզում ոչ քրքրել անցեալը և ոչ երեւան բերել բոլոր այն յանցապարտների արարքները, որոնք իրենց միակ արդարացման միջոցը «օրւայ արժէքով հաց ուտելու և կեղծելու» մէջ են գտնում։

Նրանք շատ փոքր են և խղճալի, թզուկ, ոչնչութիւն, ներկայի հրաշագեղ յաղթանակի առաջ։ Չարժէ երբեք զբաղւել նրանցով։

Սակայն Հայ իրականութեան այս վերջին կարեւոր կացութեան մէջ մնում է մի անլուծելի հարց և դա նա է, որ պիտի վճռւի ամբողջ հայութեան հարիւրին հարիւր տոկոսի կողմից։ Բոլորն էլ անկեղծօրէն, սրտաբացօրէն, վեհանձնօրէն անցեալը թողնելով խաւարի մէջ) պիտի յայտարարեն իրենց անյողդողդ կամքը՝ լծւելու Մայր Հայրենիքի առաջադրած ուղղութեան, որը միակ և ճշգրիտ փրկութեան ուղին է։

Առանց ծամծմելու, առանց պայմանադրութեան, առանց երկւութեան, առանց քաշքշուքի և առանց երկդիմութեան, սրտաբաց, անկեղծ ու ճշմարիտ կերպով։

Այս անելու համար մեծ քաջութիւն է պէտք, ինքնահաշւետւութիւն և իր յանցապարտ ընկերների դատապարտումն է պէտք՝ բոլոր միւսների ապահովութեան համար, և դա պիտի արւի՝ Դրօ և Ընկերութեան դատապարտութեամբ, որոնց ունեցած սև գործունէութեան փաստերը վխտում են այժմ ամենուր, լինի դա Թեհրան թէ այլուր՝ երեւան են գալիս «յանուն պատմական ճշմարտութեան» որը սիրելի բնաբանն է դարձած „Ալիք"-ի, և մի գուցէ իր իսկ Թեհրանի դրդապատճառով երեւան եկած։

Անկեղծ ու ճշմարիտ հայրենասիրութիւնը շատ բան կարող է փոխել և ուղղել, շատ յանցանքներ կարող է ներել տալ, իսկ դեմագոգական փաստարկութիւններն ու պատեհպաշտ ընկնելը «Թեհրանի Հայ Մամուլը» և նման պսեւդօ-դիւանագիտական տափակութիւններն ու թելադրանքները, որոնք երբեք չէին տեղի ունենում նախկին 20—25 տարիների ընթացքում սաստելու կրքոտ և դիտաւորեալ ընկերների ամբաստանութիւնները, այսօր փտած ապրանքների տպաւորութիւն են թողնում և ուրիշ ոչինչ։

Հարցը շատ պարզ է ու յստակ և դա դրւել է վաղուց, մի երկու տարի առաջ մեր ականաւոր բանաստեղծ ակադեմիկոս Ա. Իսահակեանի կողմից։

Ահա թէ նա ինչ է հարց տալիս իր «Աւանտուրիստներ» յօդւածի վերջում.—



Նստած են՝ դաշնակցական Դրօ Կանայեան, գերման հրամանատարութեան կողմից նշանակւած Դրօյի տեղակալ՝ գերմանացի Ռօտմիստեր Փուլլոյ։

Կանգնած են ձախից—աջ՝ մի գերմանացի, մի դաշնակցական զինւոր, Դրօյի շտաբում հերու տնտեսական բաժնի վարիչ աշխատող՝ գերմանացի Զօնդեր Ֆիւրեր, դաշնակցական Բենօ, Բաղդասարեան Տիգրան—Բեկ, դաշնակցական մի զինւորական, դաշնակցական խմբապետ՝ Թարխանեան Կուռօ։

«Մենք ուզում ենք մեր սրտագին խօսքը վերջացնել մի իրաւացի հարցով և կոչով։

«Յայտնի է, որ այս աւանտուրիստ խմբակի Դաշնակցութեան Գուսակցութեան նշանաւոր անդամներից են եղել—Ա. Խատիսեան, Ա. Աբեղեան և մանաւանդ Դրօ Կանայեան։ Դաշնակցութիւնը, որը տասնեակ տարիներ կռիւ է մղել սուլթանական հայաջինջ բռնակալութեան դէմ, նրա ոճրագործ փաշաների, քուրդ վայրագ բէկերի և աղաների դէմ, ազատելու հայ ժողովրդին այդ բարբարոսների անվերջ կեղեքումներից և հարստահարութիւններից, բռնաբարութիւններից և սիստեմատիկ ջարդերից և բնաջնջումից, բայց երկարատեւ անհաւասար պայքարի մէջ Դաշնակցութիւնն ունեցել է անձնուէր մարտիկներ, որոնք ընկել են կռւի դաշտերում, զոհւել են, կախաղան բարձրացել։ Այդ պատմական հոսանքի մի անդամն եմ եղել և ես, որ բոլորի հետ միասին ոգեւորւած աշխատել ենք ստեղծել հայ բազմաչարչար ժողովրդի համար ազատ, մարդավայել կեանք, և հաւատացել ենք մեր արդար դատի յաղթանակին—, բայց պատմութեան կամքը հայ ժողովրդի ազատագրական անյոյս կռիւը պսակեց միմիայն Ռուս մեծ ժողովրդի ռեվոլուցիայի հոյակապ յաղթանակով, որի յաջողութեան համար զոհւեցին նաև հայ ժողովրդի ծոցից բղխած նոր անձնուէր մարտիկներ։ Անլուր կոտորածներից փրկւած հայութիւնը գտաւ իր գոյութեան կռւանը և իր հազարամեայ երազների կենսագործումը, սովետական իրաւակարգի մէջ։

«Հիմայ, ի տես այս դաւաճանների, ես Հայաստանի բովանդակ հայութեան հետ, նրա ազնիւ, աշխատող ինտելիգենցիայի հետ, հարց ենք տալիս Դաշնակցութեանը. նա գիտի, որ իր ծոցից ելած այդ մարդիկ դաւում են մեր ժողովրդի պայքարին, նրա ազատութեանը, նրա հացին, նրա գոյութեանը, գործիք դառնալով ժողովրդների ազատութեան թշնամի Հիտլերին, և եթէ գիտեն, դատապարտում են նրանց վտանգաւոր ձեռնարկը, անարգում են նրանց ազգակործան արարքը, պայքարում են նրանց դէմ, մասսաների առաջ մերկացնում են նրանց, հասկացնում են գաղութահայութեանը այս աւանտուրայի ծանրութիւնը և աւերիչ հետեւանքները։ Այլապէս նրանք ևս Դաշնակցութեան ներկայ ղեկավարները, յանցաւոր են հայութեան և պատմութեան առաջ։

«Նաև կոչ ենք անում արտասահմանի հայութեանը, որ լինեն զգաստ այս ճգնաժամային օրերին, մոռանան իրենց կուսակցական, խմբակցական ներքին ճղճիմ հաշիւները, և մի մարդու պէս, մի սրտով, մի հոգով, ամբողջովին կանգնեն Մայր Հայրենիքի պաշտպանութեան սրբազան դրօշի տակ։ Ամեն միջոցներով, խօսքով և գործով արգելեն, վիժեցնեն այդ և նման խմբակների վտանգալից աւանտուրան, որ հայ ժողովրդի իսպառ բնաջնջումը կնշանակէ։ Թող գիտնան բոլորը, որ կան դարաւոր թշնամիներ, որոնք սպասում են Սովետների Միութեան պարտութեանը, աշխարհի երեսից ընդմիշտ վերացնելու հայ ժողովրդին։ Թող գիտնան բոլորը, որ մեր փրկութիւնը միաւորւած պետութիւնների և համաշխարհային դեմոկրատիայի յաղթանակի մէջն է միմիայն։ Թող գիտնան բոլորը, որ Հիտլերի խորտակումը անխուսափելի է և անտարակուսելի։

«Այս հաւատով և համոզմունքով կռւում է մեր ժողովուրդը մեծազօր Կարմիր Բանակի դրօշի տակ։ Ներշնչւած մեր նւիրական դատով, մեր հերոսների անձնազոհ սխրագործութիւններով և մեր ժողովրդի զոհաբերումներով անդրդւելի գիտենք, որ հայ հինաւուրց ազատամիտ ժողովուրդը դուրս կըգայ այս զարհուրելի պատերազմից յաղթանակած և նոր թափով մեծ Ստալինի առաջնորդութեամբ պիտի քայլէ դէպի ազգային և համամարդկային բարձր իդէալներով տոգորւած, այլեւս ընդմիշտ ապահովւած իր լուսաւոր ապագան։»

XXX

Եւ այսօր ահա իրականացել են Աւետիք Իսահակեանի նախատեսած բոլոր խնդիրները։

Յաղթել է Կարմիր Բանակը, ջախջախւել է Հիտլերը, Մայր Հայրենիքը Սովետական Միութեան մեծ աջակցութեամբ և ժեներալիսիմ Ստալինի հայրական հոգատար ղեկավարութեան ներքոյ առաջանում է դէպի ծաւալման և բարգաւաճման նոր հորիզոններ, և վերջապէս երեկւայ Դր. Համօ Օհանջանեանի հերքումին հակառակ երեւան է եկել տխուր ու ցաւալի իրականութիւնը՝ հիտլերիզմին հակւած ու ծառայած Դրօ Կանայեանների, Աբեղեանների և Ընկերութեան։

Այս բոլորից յետ, կրկնում ենք մի անգամ ևս, իբրև հայ միաձոյլ ճակատի և հայ ժողովրդի հաւաքական շահերի պաշտպան, որ վերջ պիտի գտնէ երկդիմի այս կատակերգութիւնը, և հրապարակաւ պիտի դատապարտւեն ազնիւ և անկեղծ հաւատքով տարւած դաշնակների կողմից Դրօներն ու պիտի փակւի այդ հին էջը, սկսելու համար հայրենանւէր հայ ժողովրդի ոսկէ գրքոյկի նոր էջը՝ յանուն Մայր Հայրենիքի բարգաւաճման ու զօրացման։

Հ. Գ.

VERATSNUND | July 13, 1945